ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՃԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

No 58
«24» «11» 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ճաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի 21 նոյեմբերի կայացած թիվ N9 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 10 էջ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՃԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11063-11
«24» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 նոյեմբերի 2011 թվականի N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

2011 թվականի
նոյեմբերի 21
Գ. Ծաղկալանջ

Հավելված
Լոռվի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «21» նոյեմբերի 2011թ.
N-Ն որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

2. 2010 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ N4-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

3. Ծաղկալանջի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

4. Ծաղկալանջի գյուղական համայնքի բնակիչներին գույքահարկի արտոնություններից օգտվելու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 նոյեմբերի 2011 թվականի N 2-Ն
գ. Ծաղկալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 17-ի «2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ N4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Եկամտային մասի հոդի հարկի 6844.7 հազար դրամից պակասեցնել 2305.6 հազար դրամ:

   2) Ծախսային մասից պակասեցնել.

   ա/ 01-6-1 հատվածի 4241 հոդվածի 263.0հազար դրամից 133.0 դրամ,

   բ/ 08-2-3 հատվածի 4251 հոդվածի 800.0 հազար դրամից 200.0 հազար դրամ,

   գ/01-1-1 հատվածի 4212 հոդվածի 800.0 հազ. դրամից 200.0 հազար դրամ, 4234 հոդվածի 300.0 դրամից 222.0 հազար դրամ:

   3) 01-1-1 հատվածի 5122 հոդվածից 63.0 հազար դրամ և 5132 հոդվածից 164.0 հազար դրամ տեղափոխել 01-1-1 հատվածի 5112 հոդվածին:

2. Պահուստային ֆոնդից պակասեցնել 1550.6 հազար դրամ:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի 2011 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 23778.3 հազ. դրամ, ծախսերի գծով՝ 24292.4 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 514.1 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագ.)	դեմ (ստորագ.)	ձեռնպահ (ստորագ.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

2011 թվականի
նոյեմբերի 21
Գ. Ծաղկալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 նոյեմբերի 2011 թվականի N 3-Ն

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագ.)	դեմ (ստորագ.)	ձեռնպահ (ստորագ.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

2011 թվականի
նոյեմբերի 21
Գ. Ծաղկալանջ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿԱԼԱՆՋԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N3-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՇԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«1.»Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինարարությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

«1)» մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ. մինչև 7500 դրամ

«2)»սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

«ա.»/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ. մինչև 15000

«բ.»/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ. մինչև 25000

«գ.»/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ. մինչև 35000

ոչ հիմնական օբյեկտների տեղադրման համար՝

«3)». մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հազար դրամ. մինչև 1500

«4)». 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ. մինչև 2500

«2.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինարարությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

«1)» չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ. մինչև 1500 դրամ

«2)» բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

«3)» նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

«3.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հազար դրամ. մինչև 2500 դրամ:

«4.» Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ. 0-ից 17500 դրամ:

«1)» ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ. 1500-ից 17500դրամ:

«5.» Համայնքի տարածքում՝

«1)» բացօթյա առևտուր կազմակերպելու թուլատվության համարտեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ. 350 դրամ

«2)» հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ. 150000 –200000 դրամ

«6.» Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ. 50000:

«7.» Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո բաշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

«1)» առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ. 25.000 դրամ

«2)» հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ. 50.000-10000 դրամ

«3)» բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ. 200.000-500.000 դրամ

«4)» խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ. 500000-100.000 դրամ

«5)» շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ. 250.000-500.000 դրամ

«6)» վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ. 100.000-150.000 դրամ

«8.» Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ. 1.000-2.000 դրամ

«2)» թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ. 2.500 – 3.500դրամ

«3)» ցայլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ. 500-1.500 դրամ

«4)» դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ. 700 դրամ

«9.» Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ. 0-1000 դրամ

«10.» Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար հինգ հարյուր դրամ. 0-1500 դրամ

«11.» Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

«12.» Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
«13.» Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 նոյեմբերի 2011 թվականի N 4

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի չորրորդ կետով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ծաղկալանջի գյուղական համայնքի բնակիչներին արտոնել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1.Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

2011 թվականի
նոյեմբերի 21
Գ. Ծաղկալանջ

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկաձորի գյուղական խորհրդի
ավագանու «24» նոյեմբերի 2011թ.
N 4 որոշման

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԱԴՐԱՄԱՍՋՈՅՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Պողոսյան Գևորիկ Խաչատուրի	18.067 դրամ
2. Նիկողոսյան Սերժիկ	7.500 դրամ